

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐՊՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒՑ

Մէջ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1968 տարուան ընթացքին ամէն Կիրակի եւ տօնական օրերունյեկեղեց-
ւոյս եկեղեցական ժամապաշտութիւնն եւ Ս.Պատարագ տեղի ունեցաւ:

Միայն հետեւեալ պարագաներուն Ս.Պատարագ չունեցանք, եկեղեցւոյս
հովիւին պաշտօնով կամ արձակուրդով քաղաքէս բացակայութեան պատճառաւ:

Ծնորհիւ եկեղեցւոյս հաւատաւոր եւ նուիրեալ դպիր-ուրարակիրներուն
կարելիութեանց սահմանին մէջ ջանացին անոնք Կիրակնօրեայ պաշտամունքունե-
նալ ի միթարութիւն ներկայ հաւատացեալներուն.-

- 1) Մայիս 5, 1968 Թեմական Պատգամաւորական ժողովին առիթով:
- 2) Յունիս 2, 1968 Ամենայն Հայոց Հայրապետի Մոնթրէալ այցելու-
թեան առիթով:
- 3) Հոկտեմբեր 13, 1968 Դպրաց Դասերու Միութեան Տարեկան Համաժողովին
- 4) Դեկտեմբեր 8, 1968 հովիւին տարեկան արձակուրդին առիթով

Գանատայի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Գերշ.Տ.Վաչէ Ս.Եպիսկոպոս
Յովսէփեան, բացի վարչական եւ կազմակերպչական պարտականութիւններէն, հովիւի
բացակայութեան պատարագեց եւ քարոզեց Ս.Եկեղեցւոյս մէջ.-

- | | |
|----------------------|--------------------------------------|
| 1) Յունուար 5, 1968 | ճրագալոյց Ս.Ծննդեան |
| 2) ,, 7, 1968 | Տօն Ս.Ծննդեան եւ Աստուածայայտնութեան |
| 3) Փետրուար 25, 1968 | Վարդանանցի Տօնին առիթով |
| 4) Մարտ 24, 1968 | Օրօրայի Կրօնագիտական դասընթացքին |
| 5) Դեկտեմբեր 1, 1968 | հովիւի տարեկան արձակուրդին |
| 6) ,, 15, 1968 | Ս.Ցակոբի Տօնին առիթով |

Այսպէսով ընդամէնը տարին 51 Ս.Պատարագ մատուցուեծ է մեր եկեղեցւոյ
մէջ:

Կատարուած է 28 Մկրտութիւն, 14 Ս.Պսակի արարողութիւն եւ 5
ննջեցեալներու թաղման տխուր արարողութիւն: 28 Մկրտութիւններէն 5-ը եկած
են մօտ կամ հեռու քաղաքներէն

Եկեղեցւոյս հովիւը ջանացածէտալ Տնօրհնէքի այցելութիւն ծուխիս
ընտանիքներուն եւ օրհնած անոնց ընտանեկան աղն ու հացը: Կանոնաւոր արձանա-
գրութիւն պահուած է խորհրդակատարութեանց եւ Տնօրհնէքի այցելութեանց:
